# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# N ՀՀ ԿԱ Ո ՇՀԾՁԲ-15/1-Ի/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք.Երևան** **19. մայիսի 2017թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա.Համբարյանի, ով գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 20.03.2017թ-ին կնքված N ՀՀ ԿԱ Ո ՇՀԾՁԲ-15/1-Ի/2-2 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1.1 **ՀՀ ԿԱ Ո ՇՀԾՁԲ-15/1-Ի/2-2** ծածկագրով գնման պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է **800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն: Սույն թվականի առաջին եռամսյակում մատուցված ծառայությունների համար վերը նշված պայմանագրի թիվ 1 համաձայնագրով նախատեսվել էր վճարել **500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Սույն համաձայնագրով կողմերը հաստատեցին **ՀՀ ԿԱ Ո ՇՀԾՁԲ-15/1-Ի/2-2** ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում մնացած եռամսյակների ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների վճարման ժամանակացույցը, որը կազմում է **300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.3 Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումը Պատվիրատուն կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

1.4 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Ոստիկանություն | «Յուքոմ» ՍՊԸ |
| ք.Երևան, Նալբանդյան 130 | ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | Ամերիաբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900013150041 | Հ/Հ 1570043102134100 |
| ՀՎՀՀ 01840082 | ՀՎՀՀ 00024873 |
| էլ. հասցեն՝ policevahe@mail.ru | էլ. հասցեն՝ corporate@ucom.am |
| Հեռ. 010-59-66-76 | Հեռ. (060)444466, (011)444444 |
| /ՀՀ ոստիկանության ... / | Կ.Ասատուրյան |
| (ստորագրություն) | |

Հավելված N 1
19 մայիսի 2017թ.
Համաձայնագիր N 1
N ՀՀ ԿԱ Ո ԾՀԾՁԲ-15/1-Ի/2-2 գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. արտաբյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 2. | **Ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ** | | | | | 100 000 | 100 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | 300 000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
էլ. հասցեն՝ policevahe@mail.ru
Հեռ. 010-59-66-76

/ՀՀ ոստիկանության պետ/
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
էլ. հասցեն՝ corporate@ucom.am
Հեռ. (060)444466, (011)444444

(ստորագրություն)
Կ.Տ.